Հավելված 1

Դիտարկված դատական գործերի ցուցակ

Դատական վարույթն ավարտվել է, կայացվել է վերջնական որոշում:

Դատական վարույթը չի ավարտվել, սակայն կայացվել է առնվազն մեկ ըստ էության դատական ակտ:

Դատական վարույթն ընթացքի մեջ է, ըստ էության դատական ակտ դեռ չի կայացվել:

	Հայցվոր	Պատասխանող	Հայցը ներկայացնելու ամսաթիվը Գործի համարը	Պահանջը	Դատաքննության ընթացքը
1.	Իջևանի քաղաքապետարան	Հետաքննող լրագրողների ՀԿ 05/05/2008թ. «Հետք» օրաթերթում տպագրված Ոսկան Սարգսյանի «Ո՞ւմ գրպանն են մտնում ավազահանքի փողերը» հոդվածի կապակցությամբ	24-06-2008 ԵՔԴ/0665/02/08	• Հերքում • 930,000 դրամ փաստ. վարձ. • 26,300 պետ տուրք	**Դատաքննությունն ավարտվել է** 06/04/2011 Վճռաբեկ դատարանի կողմից Հետաքննող լրագրողների ՀԿ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ: Բողոքը բավարարվել է մասնակի՝ • 450,000 դրամ փոխհատուցում փաստաբանի ծախսերի դիմաց,
2.	Հրաչյա Քեշիշյան	«Հրապարակ» օրաթերթ ՍՊԸ («Հրապարակ» օրաթերթ) «Հրապարակ» օրաթերթի 2009թ. հուլիսի 18-ի N 133 (343) «Ժը տեմ, Ժը տեմ» վերնագրով, Լենա Լալազարյանի հեղինակությամբ հոդվածի կապակցությամբ:	20-08-2009 ԵԿԴ/1765/02/09	Մինչ դատարան դիմելը նամակով պահանջել է հերքում Հայցով պահանջել է. • Հերքում • Ներողություն խնդրել • 5 մլն դրամ փոխհատուցում • 2 մլն փաստաբ. վարձատրություն • 40,000 դրամ պետ տուրք	**Դատաքննությունն ավարտվել է.** Առաջին ատյանի դատարանը /դատավոր Ռ. Ներսիսյան/ հայցը բավարարել է մասնակի: Կայացվել է հետևյալ որոշումը. Դատարանը որոշել է. • Տպագրել հերքում,՝ սահմանելով հերքման տեքստը, • Ներողություն խնդրել • 300,000 դրամ փոխհատուցում փաստաբանի ծախսերի դիմաց,, • 6,000 դրամ պետական տուրք • պատասխանողից բռնագանձել 70,560 դրամ փորձաքննության դիմաց, • 5 մլն դրամ փոխհատուցման պահանջը մերժել • Հայցվորից բռնագանձել 134,000 դրամ որպես չվճարված պետ տուրք Պատասխանողի կողմից բերվել է վերաքննիչ բողոք, որը մերժվել է. Վճարվել է 10,000 դրամ պետ. Տուրք: Պատասխանողի կողմից բերվել է վճռաբեկ բողոք, վճարվել է 20,000 դրամ պետ. տուրք.

					Վճռաբեկ դատարանը 01/06/2011թ. մերժել է ընդունելիության հարցը: Առաջին ատյանի դատարանի որոշումը մտել է ուժի մեջ:
3.	Բի լայն ՍՊԸ	Հայաստանի հանրային հեռուստաընկերություն ՓԲԸ	22/07/2010 ԵԿԴ/1513/02/10	• Հերքում • 100,000 դրամ փոխհատուցում	**Դատաքննությունն ավարտվել է** Վճռաբեկ դատարանը վերադարձրել է բողոքը 08/02/2012
4.	Սուսաննա Բաղդասարյան (Վայոց ձորի մարզի Արենի գյուղի բնակիչ)	Հայք օրաթերթ և Արման Գալոյան (լրագրող) և գործով վկա Սվետլանա Առաքելյան (չի հանդիսանում լրագրող) «Հայք» թերթի 08/02/2008թ.-ի թիվ 24/1503/ համարում երկրորդ պատասխանողի հեղինակած «Սպանության հետքերով» հոդվածի առնչությամբ:	19/08/2010 ԵԿԴ/1708/02/10	• հերքում	**Դատաքննությունն ավարտվել է** Առաջին ատյանի Կենտրոն դատարանը բավարարել է հայցը մասնակի, 27/09/2011թ. • Տպագրել հերքում, • պետ տուրքը գանձել է հայցվորից **Հայցը ընդդեմ լրատվամիջոցի մերժվել է:** Դատարանը սահմանել է, որ անձը կարող է դիմել դատարան առանց հերքման պահանջ ներկայացնելու, իսկ հայցային վաղեմության ժամկետը բարձրացրել է մինչև երեք տարի՝ հողում կատարելով քաղաքացիական օրենսգրքի վրա (հոդված 332-րդ հոդված):
5.	«Գլենդեյլ Հիլզ» ՓԲԸ	«Սկիզբ մեդիա կենտրոն» ՍՊԸ	23/09/2010	• հերքում • 2 մլն	**Դատաքննությունն ավարտվել է**

		(«Ժամանակ» օրաթերթ) («Ժամանակ» օրաթերթի 26/08/10 «1000 դոլար լռության դիմաց» վերնագրով հոդվածի կապակցությամբ)	ԵԿԴ/1963/02/10	փոխհատուցում զրպարտության դիմաց • 500,000 դրամ փոխհատուցում ծախսերի դիմաց	Առաջին ատյանի դատարանը հայցը բավարարել է մասնակի. • Տպագրել հերքում, • 200,000 դրամ փոխհատուցում զրպարտության դիմաց, • 300,000 դրամ փոխհատուցում փաստաբանի ծախսերի դիմաց, • 10,000 դրամ պետական տուրք դատավոր Ալեքսեյ Սուքոյան/ **01/08/2012թ**. Վճռաբեկ դատարանը վերադարձրել է բողոքը և առաջին ատյանի դատարանի որոշումը մտել է ուժի մեջ:
6.	Գեւորգ Ասատրյան «Ոսկե նուռ» հոլդինգ ընկերության գլխավոր տնօրեն	Աշոտ Խաչատրյանի եւ «Երեւան հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի	30/09/2010 ԵԱԴԴ/1073/02/10	• Հերքում • 200,000 դրամ փոխհատուցում	**Դատաքննությունն ավարտվել է** Առաջին ատյանի դատարանն ամբողջությամբ մերժել է հայցը: Վճիռը չի բողոքարկվել
7.	Թաթուլ Մանասերյան (ԱԺ նախագահի նախկին խորհրդական)	«Սկիզբ մեդիա կենտրոն» ՍՊԸ («Ժամանակ» օրաթերթ) «Ժամանակ» օրաթերթի zhamanak.com էլեկտրոնային կայքում 29/09/2010թ. հրապարակված «Քր. գործ՝ ԱԺ նախագահի խորհրդականի դեմ» վերնագրով հոդվածի առնչությամբ:	29/10/2010 ԵԿԴ/2293/02/10	• Պահանջում է հերքում, • 2 մլն դրամ փոխհատուցում • 500,000 դրամ փաստաբանական ծախսերի դիմաց, • Պետ. Տուրք 44,000 դրամ	**Դատաքննությունն ավարտվել է:** Առաջին ատյանում /դատավոր Կարինե Պետրոսյան/ բավարարվել է մասնակի. • տպագրել հերքում, • 300,000 փոխհատուցում, • 200,000 փաստաբանի գումար, • 10,000 պետտուրք /դատավոր Կ. Պետրոսյան/ Վերաքննիչ բողոքը մերժվել է ամբողջությամբ (15/12/2011). /դատավորներ Ս. Միքայելյան, Ն. Տավարացյան, Դ. Խաչատրյան: Գանձվել է 19,000 դրամ պետ. տուրք Ներկայացվել է վճռաբեկ բողոք, որը ընդունվել է վարույթ 07/03/2012:

					27/04/2012 Վճռաբեկ դատարանը մերժել է բողոքը, սակայն արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ:
8.	Սամվել Ալեքսանյան Ռուբեն Հայրապետյան Լևոն Սարգսյան (Ազգային ժողովի պատգամավորներ)	Դարեսկիզբ ՍՊԸ «Հայկական ժամանակ» օրաթերթ 14.10.2010թ. «Հայկական ժամանակ» օրաթերթի թիվ 188 (2623) համարում հրապարակվել է «Ութից յոթը ցուցակում են» վերտառությամբ հոդվածը, որն ուղեկցվել է ութ անձանց, այդ թվում՝ հայցվորների լուսանկարների հրապարակմամբ:	08-11-2010 ԵԿԴ/2347/02/10	• Հերքում • 6 մլն դրամ փոխհատուցում • 500,000 դրամ փաստաբանի վարձատրություն • 132,000 դրամ պետ. տուրք Բավարարվել է ամբողջությամբ	**Դատաքննությունն ավարտվել է:** Կենտրոն առաջին ատյանի դատարանի կողմից /դատավոր Կ. Պետրոսյան/ հայցապահանջը բավարարվել է մասնակի. • Տպագրել հերքում (հերքման տեքստը սահմանվել է վճռում), • 6 մլն դրամ փոխհատուցում (2-ական մլն յուրաքանչյուր հայցվորի մասով) • 132,000 դրամ պետական տուրք (44,000-ական յուրաքանչյուր հայցվորի մասով) • 500,000 դրամ փաստաբանի վարձատրության մասով վնասի փոխհատուցման պահանջը մերժել: Վերաքննիչ դատարանը վճիռն ամբողջությամբ թողել է ուժի մեջ: Վճարվել է 208,000 դրամ պետական տուրք Վճռաբեկ դատարանը **03/08/2011թ**. վերադարձրել է բողոքը: Վճիռը մտել է ուժի մեջ 03/08/2011թ.-ին և հաջորդ օրը տրվել է կատարողական թերթ:
9.	Հայկ Բաբուխանյան (ՍԻՄ նախագահ) և	Խմբագիր ՍՊԸ (www.report.am էնտերնետ կայք) և	11-11-2010 ԵԿԴ/2374/02/10	• հերքում • ներողություն խնդրել, • հրապարակել վճիռը,	**Դատաքննությունն ավարտվել է:** **27/02/2012թ**.-ին դատարանը / Կենտրոն դատարան/դատավոր Է. Թադևոսյան/ ամբողջությամբ մերժել է հայցը

	Իրավունք Մեդիա ՍՊԸ	Էդիկ Անդրեասյան (լրագրող) Վիճարկվում է 31/08/10 «Report.am» կայքէջում հրապարակված՝ ««Իրավունքի» իրավունքը Հայկ Բաբուխանյանի սրի ծայրին է» հոդվածը:		• վիրավորանքի դիմաց 1-ական մլն դրամ փոխհատուցում ընդդեմ երկու պատասխանողների, • զրպարտության դիմաց 2-ական մլն դրամ փոխհատուցում ընդդեմ երկու պատասխանողների, • 2-ական մլն յուրաքանչյորը պատասխանողից: • Ընդհամենը 2+4+4=10 մլն դրամ	ժամկետանց լինելու հիմքով՝ 1087.1 հոդվածի 13-րդ մասի պահանջը խախտելու հիմքով. Լրատվանյութը հրապարակվել է 31/08/2010թ.-ին, իսկ հայցը բերվել է 11/11/2010թ.-ին: 25/07/2012թ. Վճռաբեկ դատարանը վերադարձրել է վճռաբեկ բողոքը և առաջին ատյանի դատարանի որոշումը մտել է ուժի մեջ:
10.	Բելա և Սեդրակ Քոչարյան	«Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ (§Ժամանակ¦ օրաթերթ)	15/11/2010 ԵԿԴ/2404/02/10	• 6 մլն դրամ փոխհատուցում • Պետական տուրքի վճարումը տարաժամկետել	**Դատաքննությունն ավարտվել է:** Հայցադիմումը վերադարձվել է պետական տուրքը տարաժամկետելու միջնորդությունը մերժելու հիմքով, քանի որ հայցվորները չէին ներկայացրել որևէ փաստական տվյալներ իրենց գույքային ծանր վիճակի մասին /դատավոր Արայիկ Մելքումյան/: Հայցվորները հայցադիմումը վերադարձնելուց հետո նոր պահանջ չեն ներկայացրել, ինչպես նաև չեն բողոքարկել դատարանի որոշումը միջնորդություն մերժելու մասին: Գործը հանձնվել է դատարանի արխիվ 02/12/2010
11.	Բելա և Սեդրակ	«Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ	24/11/2010		**Դատաքննությունն ավարտվել է**

	Քոչարյան	(§Ժամանակ՝ օրաթերթ) (§Ժամանակ՝ օրաթերթի 25/09/2010թ. թիվ 1571858 համարի 5-րդ էջում հրատարակված *§Արյունը՝ Քոչարյաններից, կայֆը՝ Ծառուկյանից, իսկ Հակացնցումը՝ Լֆիկից՝* վերնագրով հոդվածի, §Ժամանակ՝ օրաթերթի 29/09/2010թ. թիվ 1591860 համարի 1-ին էջում *§Ադամանդե Ռոբը՝* վերնագրով հոդվածի և 07/10/2010թ. թիվ 1651866 համարի 1-ին էջում *§Volvo + Spayka=Սեղրակ Քոչարյան՝* վերնագրով հոդվածների առնչությամբ):	ԵԿԴ/2479/02/10	• Հերքում • 1 մլն դրամ վիրավորանքի դիմաց փոխհատուցում • 2 մլն դրամ զրպարտության դիմաց փոխհատուցում, • 3 մլն դրամ փաստաբանի վարձատրություն և այլ ծախսեր	. Առաջին ատյանի դատարանը հայցը բավարարել է մասնակի /դատավոր Ա. Մելքումյան/ սահմանել է. • Տպագրել հերքում • 1 մլն դրամի փոխհատուցում վիրավորանքի դիմաց • 2 մլն դրամի փոխհատուցում զրպարտության դիմաց • Մերժել 3 մլն դրամի փոխհատուցման պահանջը, քանի որ հանցվորները չեն հիմնավորել, որ նման ծախսեր կրել են Վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը: Պատասխանողները վճարել են 90,000 դրամ պետ. տուրք: Վճռաբեկ դատարանը 25/11/2011 մերժել է վճռաբեկ բողոքը:
12.	Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոն ՍՊԸ	Առավոտ օրաթերթ ՍՊԸ («Առավոտ» օրաթերթ և www.aravot.am կայքէջ) «Վճարվել է 10 տարվա կյանքի համար, ստացել՝ 7 տարվա: Բժիշկները հիվանդին էլ, պետությանն էլ խաբե՞լ են» (13.11.10թ.) հոդվածի համար	25/11/2010 ԵԿԴ/2494/02/10	• հերքում • պատասխանի հրապարակում • 2 մլն դրամ փոխհատուցում • 300,000 դրամ փաստաբանի վարձատրություն	**Դատաքննությունն ավարտվել է** հաշտությամբ առաջին ատյանի դատարանում /դատավոր Է. Ավետիսյան/ 03/11/2011թ.-ին ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ (հատվածներ) Պատասխանողը ընդունել է, որ 2010թ. նոյեմբերի 13-ին հրապարակված «Վճարել է 10 տարվա կյանքի համար, ստացել՝ 7 տարվա» վերնագրով հոդվածի մեջ ներկայացվել է չճշտված տեղեկատվություն: Արդյունքում հոդվածը արատավորել է Հայաստանի «Առիթմոլոգիական Սրտաբանական Կենտրոն» սահմանափակ

					պատասխանատվությամբ ընկերության աշխատակազմի և տնօրեն Սմբատ Ջամալյանի պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավը։ Պատասխանողը մինչ սույն հաշտության համաձայնությունը հաստատվելը սույն թվականի հոկտեմբերի 4-ին «Առավոտ» օրաթերթում, ինչպես նաև «www.aravot.am»ինտերնետային կայքում տպագրել է հերքում և Հայաստանի «Առիթմոլոգիական Սրտաբանական Կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պատասխանը։ Հայցվորը պարտավորվել է նույն պահանջով և հիմքով դատարան հայց չներկայացնել։
13.	Սլավիկ Ամիրյան (Գորիսի հիվանդանոցի տնօրեն)	Առավոտ օրաթերթ ՍՊԸ («Առավոտ» օրաթերթ) www.aravot.am կայքէջ «Առավոտը» հրապարակման մեջ նշել էր, որ տնօրենը յուրացրել է հիվանդանոցի աշխատակիցների աշխատավարձը և հայտարարությունը անելիս օգտվել է տեղեկատվության իր աղբյուրից, սակայն թերթը գնացել է համաձայնության՝ տեղեկատվության աղբյուրի պաշտպանությունը չգաղտնազերծելու	26-11-2010 ԵԿԴ/2504/02/10	• հերքում • 2 մլն դրամ փոխհատուցում • 200,000 փաստ. վարձ.	**Դատաքննությունն ավարտվել է** հաշտությամբ առաջին ատյանի դատարանում /դատավոր Է. Ավետիսյան/ 23/03/2011թ.-ին ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ (հատվածներ) 1.1 Կողմերը ընդունում են, որ Պատասխանողին պատկանող «Առավոտ» օրաթերթի 2010թ. հոկտեմբերի 26-ի համարում տպագրված «Գորիսում նվազագույն աշխատավարձը 20 հազար դրամ է» վերնագրով հոդվածում (այսուհետ՝ Հոդված) և «Առավոտ» օրաթերթի ինտերնետային կայքով (հասցեն՝ http://www.aravot.am/am/articles/society/847

		նկատառումներով			90/view) տարածված Հոդվածում առկա են Հայցվորի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող տեղեկություններ։ 1.2 Վերը նշվածի արդյունքում Կողմերը հաստատում են, որ Պատասխանողը պարտավորվում է մինչև 2011թվականի փետրվարի 25-ը հրապարակայնորեն հերքել Հայցվորի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող տեղեկությունները հետևյալ եղանակներով «Գորիս Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի աշխատակիցները օգտվում են իրենց արձակուրդից առանց որևէ հարկադրանքի, աշխատակիցներին արձակուրդ տրամադրվում է ՀՀ աշխատանքային օրենսդրությանը համապատասխան։ Հարկադիր արձակուրդի մասին տեղեկությունները իրականությանը չեն համապատասխանում։ Հոդվածի այն հատվածը, որ «Տնօրենն ուտում է մեր աշխատավարձերը, որոնք գրոշներ են» ոչ միայն իրականությանը չի համապատասխանում, այլ նաև վիրավորական է և անբարո։ Աշխատակիցների աշխատավարձը, ինչպես նաև արձակուրդայինները վճարվում են համաձայն աշխատանքային պայմանագրերի և ՀՀ աշխատանքային օրենսդրությանը։ Իրականությունը չի համապատասխանում նաև այն, որ աշխատակիցների աշխատավարձը ավելի ցածր է, քանի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձը։

					«Գորիս Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենը որևէ աշխատակցից չի պահանջել որևէ գումար կամ որևէ կերպ չի խոչընդոտել աշխատակիցներին Երևանում անցկացվող ՀՀ Առողջապահության նախարարության կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին մասնակցությանը, կեղծ է նաև հոդվածում հրապարկված տեղեկությունը տնօրենի կողմից վերապատրաստման համար գումար պահանջելու մասին։ Այն, որ «Գորիս Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ում երբեք անվճար բժշկական ծառայություն չի տրամադրվել, ճիշտ չէ. ՀՀ օրենսդրությամբ սահմանված տարիքի և պայմաններում գտնվող հիվանդների բուժօգնությունը անվճար է, որն էլ տրամադրվում է «Գորիս Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ում։ Իրականությանը չի համապատասխանում նաև հոդվածում տեղ գտած «Գորիս Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ում բժշկական օգնության պայմաններին վերաբերող տեղեկությունները։ «Գորիս Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի որևէ աշխատակից երբևէ չի պարտադրվել կատարել հավաքարարական աշխատանքներ, եթե դրանք չեն մտել տվյալ աշխատողի աշխատանքային գործառույթների մեջ։ Իսկ յուրաքանչյուր աշխատողի կողմից (անկախ վերջինիս գործառույթից) աշխատանքային վայրը մաքուր պահելը, բխում է աշխատանքային էթիկայի կանոններից։ Ընդհանուր առմամբ Հոդվածում տեղ

					գտած բոլոր տեղեկությունները բացառությամբ վերջին պարագրաֆից կեղծ են և իրականությանը չեն համապատասխանում։ Մենք գտնում ենք հոդվածում տեղ գտած տեղեկությունները արատավորում են «Գորիս Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի և վերջինիս տնօրենի պատիվը, արժանապատվությունը ու գործարար համբավը։ 1.5 Հայցվորը հրաժարվում է ԵԿԴ-2504/02/10 քաղաքացիական գործով բոլոր դրամական պահանջներից։ 4 Սույն համաձայնագրով Կողմերը հրաժարվում են սույն քաղաքացիական գործով (գործ ԵԿԴ-2504/02/10) վերաքննության իրավունքից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 209 հոդվածի 1-ին մասի իմաստով։
14.	Եհովայի վկաների քրիստոնեական կրոնական կազմակերպությունը և Գևորգ Զաքարյանը Աշխեն Զաքարյանը Դավիթ Հարթեյանը Ակսել Ղազարյանը Շուշանիկ Ղազարյանը Հայկ Հակոբյանը Աիդա Հակոբյանը Արթուր	Հայաստանի հանրային հեռուստաընկերություն ՓԲԸ (Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն) Գևորգ Ալթունյան Սոնա Թորոսյան Նունե Ալեքսանյան Էդգար Դավթյան Կապված 09.11.2010թ.-ին, 10.11.2010թ.-ին և 11.11.2010թ.-ին Հայաստանի առաջին	09-12-2010 ԵԿԴ/2621/02/10	• Հերքում • Հրապարակել հետևյալ պատասխանը. *«Արման Խաչիկի Թորոսյանը, ինչպես նաև վերջինիս ծնողները Եհովայի վկա չեն, չեն եղել և որևէ առնչություն երբեք չի ունեցել Եհովայի վկաների հետ։ Եհովայի վկաները հարգում*	**Դատաքննությունն ավարտվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 10/07/2012 որոշումով** ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ 1. Կողմերը արձանագրում են, որ Հեռուստաընկերությունը (այդ թվում՝ Լրագրողները) հիմնվելով www.news.am էլեկտրոնային լրատվական կայքէջից ստացված տեղեկատվության վրա, 2010թ. նոյեմբերի 9-ին և 10-ին «Հայլուր» և 2010թ. նոյեմբերի 11-ին «Տեսանկյուն»

	Մարտիրոսյանը	հեռուստաալիքով «Հայլուր» և «Տեսանկյուն» հաղորդումների շրջանակներում տարածված այն տեղեկատվությունը, համաձայն որի «իր ծնողների սպանության մեջ մեղադրվող Արման Խաչիկի Թորոսյանը Եհովայի վկա է»:		*են իրենց ծնողներին, թանկ են համարում կյանքը, հետևապես նրանց համար ուրիշին կյանքից զրկելը կամ ինքնասպանություն գործելը անընդունելի գաղափար է: Եհովայի վկաները հարգում են այլոց իրավունքներն ու արժանապատվությունը: Եհովայի վկաները աղանդ չեն, այլ հանդիսանում են Հայաստանի Հանրապետությունում պետականորեն գրանցված քրիստոնեական կրոնական կազմակերպություն:* • հրապարակայնորեն ներողություն խնդրել, • Հայտարարել, որ պատասխանողների գործողությունները խախտել են Եվրոպական կոնվենցիայի 8-րդ, 9-րդ և 17-րդ	հաղորդման ժամանակ հեռարձակել էր այն լուրը, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում իր ծնողներին սպանած Արման Թորոսյանը, Եհովայի վկա է: Այդ հաղորդումները պարունակում էին արտահայտություններ և ֆիլմից ցուցադրված հատվածներ, որոնք Հայաստանի Հանրապետությունում Եհովայի վկաների քրիստոնեական կրոնական կազմակերպությունը վիրավորական էր համարել և դիմել դատարան: 2. Կողմերն արձանագրում են նաև, որ Արման Թորոսյանի կողմից իր ծնողներին սպանելու կապակցությամբ ՀՀ Ոստիկանության Սևանի քննչական բաժանմունքում հարուցված թիվ ԳԴ5/0007/01/11 քրեական գործով նույնպես շրջանառվել է Արման Թորոսյանի Եհովայի վկա հանդիսանալու հանգամանքը, ինչը սակայն նախաքննությամբ չի հաստատվել: 3. Նկատի ունենալով, որ ՀՀ Ոստիկանության Սևանի քննչական բաժանմունքում հարուցված քրեական գործով չի հաստատվել Արման Թորոսյանի Եհովայի վկա հանդիսանալու հանգամանքը, Հեռուստաընկերությունը պարտավորվում է սույն հաշտության համաձայնության 5-րդ կետում նշված կարգով, իր կողմից թողարկվող (հեռարձակվող) «Հայլուր» լրատվական ծրագրի միջոցով տարածել (թողարկել, հեռարձակել) սույն հաշտության համաձայնության 4-րդ կետում նշված հերքման տեքստը: 4. Հերքման տեքստը՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը, հիմնվելով www.news.am

				հոդվածները և 8-րդ, 9-րդ հոդվածները 14-րդ հոդվածի հետ համատեղ • տրամադրել առավելագույն փոխհատուցում • հատուցել բարոյական վնաս • պետական տուրքը փաստաբանի վարձատրությունը	էլեկտրոնային լրատվական կայքէջից ստացված տեղեկատվության վրա, 2010թ. նոյեմբերի 9-ին և 10-ին «Հայլուրե և 2010թ. նոյեմբերի 11-ին «Տեսանկյուն» հաղորդման ժամանակ հեռարձակել էր այն լուրը, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում իր ծնողներին սպանած Արման Թորոսյանը, Եհովայի վկա է: Այդ հաղորդումները պարունակում էին արտահայտություններ և ֆիլմից ցուցադրված հատվածներ, որոնք Հայաստանի Հանրապետությունում Եհովայի վկաների քրիստոնեական կրոնական կազմակերպությունը վիրավորական էր համարել և դիմել էր դատարան: ՀՀ Ոստիկանության Սևանի քննչական բաժանմունքում հարուցված թիվ ԳԴ5/0007/01/11 քրեական գործով շրջանառվել է Արման Թորոսյանի Եհովայի վկա հանդիսանալու հանգամանքը: Նշված քրեական գործի նախաքննության արդյունքում պարզ է դարձել, որ ծնողներին սպանած Արման Թորոսյանը Եհովայի վկա չէ, հետևաբար Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը նույնպես հերքում է տեղեկատվություն առ այն, որ իր ծնողներին սպանած Արման Թորոսյանը Եհովայի վկա է: Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը տեղեկացնում է նաև, որ «Հայլուր» լրատվական և «Տեսանկյուն» հաղորդումներով Եհովայի վկաների քրիստոնեական կրոնական կազմակերպությանը վիրավորելու նպատակ չի ունեցել: 5. Հեռուստաընկերությունը պարտավորվում է սույն հաշտության համաձայնության 4-րդ կետում նշված

					հերքման տեքստը՝ 5.1. հեռարձակել Հերքում խորագրի ներքո, նույն ձևաչափով և կարգով՝ «Հայլուր» լրատվական ծրագրի հեռարձակվող հետևյալ թողարկումների ընթացքում՝ (1) 05.06.2012թ. ժամը 17.00-17.20-ի սահմաններում և (2) 05.06.2012թ. ժամը 21.00-21.20-ի սահմաններում ՝ հաշտության տեքստի բանավոր վերծանմամբ. 5.2. 05.06.2012 թվականից մինչև 14.06.2012թ. (ներառյալ) տեղադրել www.1tv.am կայէջում, նորություններ բաժնում՝ առնվազն առաջին 5 նորությունների շարքում՝ նորություններ բաժնի առաջին էջում։ 6. Սույն համաձայնությունը կնքող կողմերը հայտարարում են, որ միմյանց նկատմամբ որևէ այլ պարտք ու պահանջ չունեն (այդ թվում՝ դատական ծախսերի հետ կապված), բացառությամբ սույն համաձայնության մեջ նշվածի։ 7. Կազմակերպությունը և Կազմակերպության անդամները հրաժարվում են Հեռուստաընկերության և Լրագրողների նկատմամբ իրենց մյուս պահանջներից։ 8. Դատական ծախսերի հետ կապված հարցը համարվում է լուծված։ 9. Սույնով կողմերը հրաժարվում են վերաքննության իրավունքից։ 10. Սույն հաշտության համաձայնությամբ նախատեսված պարտականությունը չկատարելու դեպքում Հայցվորը կամ Պատասխանողը ձեռք են բերում իրավունք օրենքով սահմանված կարգով պահանջելու և ստանալու կատարողական թերթ և այն ներկայացնելու կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով

					սահմանված կարգով։ 11. Սույն հաշտության համաձայնությունը կազմված է երեք հավասարազոր օրինակից, որոնցից մեկական օրինակ տրվում է յուրաքանչյուր կողմին, իսկ երրորդ օրինակը կցվում է հաշտության համաձայնությունը հաստատած դատարանի վարույթում գտնվող դատական գործին։ 12. Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ, 109-րդ և 133-րդ հոդվածներով՝ Կողմերը հայտարարում են, որ ծանոթ են հաշտության համաձայնության հետ կապված դատավարական հետևանքներին և դատարանից խնդրում են հաստատել սույն հաշտության համաձայնությունը և այդ հիմքով կարճել քաղաքացիական գործի վարույթը։ 13. Սույն հաշտության համաձայնությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից։
15.	Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոն ՍՊԸ	Առավոտ օրաթերթ ՍՊԸ («Առավոտ» օրաթերթ և www.aravot.am կայքէջ) «Իսկ ո՞ւր մնաց Հիպոկրատի երդումը» (01.12.2010 թ., էլեկտրոնային տարբերակ) հոդվածի համար։	21/12/2010 ԵԿԴ/2707/02/10	• հերքում • պատասխանի հրապարակում • 2 մլն դրամ փոխհատուցում • 300,000 դրամ փաստաբանի վարձատրություն	**Դատաքննությունն ավարտվել է։** 19.04.2012թվ. ք.Երևան ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԿՆՔՎԵԼ Է ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ք. Երևան «04ե ապրիլի 2012թ. ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում

					գտնվող թիվ ԵԿԴ/2707/02/10 քաղաքացիական գործն ըստ հայցի Հայաստանի «Առիթմոլոգիական Սրտաբանական Կենտրոնե ՍՊԸ-ի ընդդեմ «ԱՌԱՎՈՏե օրաթերթ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության մասին քաղաքացիական գործով, Հայցվոր՝ Հայաստանի «Առիթմոլոգիական Սրտաբանական Կենտրոնե ՍՊԸ–ն, ի դեմս Հայցվորի ներկայացուցիչ Մուրադ Ասրյանի (այսուհետ՝ Հայցվոր) և Պատասխանող՝ «ԱՌԱՎՈՏե օրաթերթ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ՍՊԸ-ն, ի դեմս Մ. Մերուժանյանի (այսուհետ՝ Պատասխանող), -նպատակ ունենալով փոխզիջումների հիման վրա լուծել մեր միջև առկա խնդիրները, -հավաստելով, որ սույն համաձայնությունը կնքելու պահին առաջնորդվում ենք սթափ գիտակցությամբ և գործում առանց հարկադրանքի, -արտահայտելով հաշտության հասնելու ձգտումը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի դրույթներով, 42-րդ հոդվածի 6-րդ կետով կնքեցինք սույն հաշտության համաձայնությունը հետևյալի մասին. Պատասխանողը ընդունում է, որ 01.12.2010թ. հրապարակված «Իսկ ո՞ւր մնաց հիպոկրատի երդումըե վերնագրով հոդվածի մեջ ներկայացվել է չճշտված տեղեկատվություն: Արդյունքում հոդվածը արատավորել է Հայաստանի

					«Առիթմոլոգիական Սրտաբանական Կենտրոնե ՍՊԸ-ի գործարար համբավը, աշխատակազմի եւ տնօրեն Սմբատ Ջամալյանի պատիվն ու արժանապատվությունն։ Պատասխանողը մինչ սույն հաշտության համաձայնությունը հաստատվելը «ԱՌԱՎՈՏե օրաթերթում տպագրել է հերքում և Հայաստանի «Առիթմոլոգիական Սրտաբանական Կենտրոնե ՍՊԸ-ի պատասխանը։ Հայցվորը, միաժամանակ, պարտավորվում է սույն հաշտության համաձայնագիրը հաստատվելուց հետո նույն պահանջով և հիմքով, ինչպես նաև «Իսկ ո՞ւր մնաց հիպոկրատի երդումը» վերնագրով հոդվածի հիմքով որևէ այլ պահանջով դատարան հայց չներկայացնել ընդդեմ պատասխանողի։ Կողմերը դիմում են դատարանին՝ հաստատելու սույն հաշտության համաձայնությունը։ Հաշտության համաձայնությունը կազմվում է երեք օրինակից, որից մեկական օրինակ հանձնվում է կողմերին և մեկ օրինակ ներկայացվում է ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի հաստատմանը։
16.	Առիթմոլոգիական Սրտաբանական Կենտրոն ՍՊԸ	«Մեդիա Կոնսալտ՝ ՍՊԸ (news.am էլեկտրոնային կայք) Դատավարության սկզբում հայցապահանջը ներկայացվել էր Նյուս լրատվական-վերլուծական	22-12-2010 ԵԿԴ/2733/02/10	• հերքում • 2 մլն դրամ փոխհատուցում • 300,000 դրամ փաստաբանի վարձատրության դիմաց	Դատաքննությունն ավարտվել է։ 03.07.2013թ. Վճռաբեկ դատարանը վերադարձրել է բողոքը։ Աջափնյակի առաջին ատյանի դատարանն ամբողջությամբ մերժել է հայցը 14/12/2012թ.-ին այն հիմքով, որ լրատվանյութում հղում է արվել

		գործակալության դեմ Կենտրոն դատարան, սակայն այնհուհետև պատշաճ պատասխանող է ճանաչվել Մեդիա Կենտրոն ՍՊԸ-ն: Հայցը վերաբերում է 23/11/10 «news.am»-ում հրապարակված «Սրտի արատով հիվանդին առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնում «ֆոռացրել» են ու այլ սարք տեղադրել» հոդվածին, որում ՀՀ քաղաքացի Հովհաննես Կաթրջյանը լրագրողի հետ հարցազրույցում մեղադրել է բժշկական կենտրոնին՝ իրեն խաբելու եւ 10-ամյա շահագործման ժամկետ ունեցող էլեկտրոկարդիոխթանիչի փոխարեն մեկ այլ՝ էժանագին սարք վիրահատությամբ տեղադրելու մեջ:			աղբյուրին՝ ֆիզիկական անձին:
17.	Գևորգ Հայրապետյան (դատապարտյալ, պատիժը կրում է Նուբարաշեն ՔԿՀ-ում)	«Մուլտի Մեդիա Կենտրոն Թիվի» ՓԲԸ (Կենտրոն հեռուստատեսություն) Կենտրոն հեռուստաընկերության «Հետաքննություն» հաղորդաշարի շրջանակներում հեռարձակված տեսանյութի առնչությամբ:	10/01/2011 ԵԱԴԴ/0003/02/11	• 15 մլն իսկ այնուհետև նվազեցվել է 3 մլն դրամ փոխհատուցման պահանջ, • 300,000 դրամ փաստաբ. ծախսեր, որը ներառվում է 3 մլն դրամ պահանջի մեջ • Պարտավորեցնել Մուլիտի Մեդիա Կենտրոն Թիվի՝ ՓԲ ընկերությանը	**Դատավարությունն ավարտվել է:** Աջափնյակի առաջին ատյանի դատարանը /դատավոր Ա. Սմբատյան/ ամբողջությամբ մերժել է հայցապահանջը: Վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը: Վճռաբեկ դատարանն անընդունելի է համարել բողոքը 02/11/2011:

				հայցվորին և նրա ներկայացուցչին ուղիղ հեռարձակմամբ անվճար հեռուստաժամ տրամադրել	
18.	Աշոտ Հարությունյան (դատապարտյալ, պատիժը կրում է Վարդաշետ ՔԿՀ-ում)	«Մուլտի Մեդիա Կենտրոն Թիվի» ՓԲԸ (Կենտրոն հեռուստատեսություն) Կենտրոն հեռուստաընկերության «Հետաքննություն» հաղորդաշարի շրջանակներում հեռարձակված տեսանյութի առնչությամբ:	10/01/2011 ԵԱԴԴ/0004/02/11	• 3 մլն դրամ, • 250,000 դրամ փաստաբ. ծախսեր, որը ներառվում է 3 մլն պահանջի մեջ • պարտավորեցնել Մուլիտի Մեդիա Կենտրոն Թիվի՝ ՓԲ ընկերությանը հայցվորին և նրա ներկայացուցչին ուղիղ հեռարձակմամբ անվճար հեռուստաժամ տրամադրել	**Դատաքննությունն ավարտվել է** Աջափնյակի առաջին ատյանի դատարանը /դատավոր Ա. Սմբատյան/ ամբողջությամբ մերժել է հայցապահանջը: Վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը: Վճռաբեկ դատարանն անընդունելի է համարել բողոքը 09/11/2011
19.	Առիթմոլոգիական Սրտաբանական Կենտրոն ՍՊԸ	Նովոյե Վրեմյա Հասարակական-Քաղաքական Անկախ թերթ ՍՊԸ («Նովոյե Վրեմյա» թերթ) 09/12/2010թ.-ին օրաթերթում հրապարկված «Глубокие тайны Смбата Джамаляна» հոդվածի առնությամբ:	24-01-2011 ԵԿԴ/0121/02/11	• հերքում • 2 մլն դրամ փոխհատուցում	**Դատաքննությունն ավարտվել է** հաշտությամբ առաջին ատյանի դատարանում /դատավոր Է. Ավետիսյան/ 18/04/2011.-ին «ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ (հատվածներ) Պատասխանողը ընդունում է, որ 2010թ.-ի դեկտեմբերի 9-ին հրապարկված «Глубокие тайны Смбата Джамаляна» հոդվածը (այսուհետ՝ Հոդված) հանրությանը ներկայացվել է առանց ձեռնարկելու ողջամիտ միջոցներ՝

					պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն չի ներկայացվել այդ տվյալները։ Պատասխանողը ընդունում է, որ Հոդվածը պարունակում է զրպարտություն, անհիմն ենթադրություններ, սուտ տեղեկատվություն և ոչ հավաստի մեկնաբանություններ, քանի որ Հոդվածի մեջ տեղ են գտել փաստացի տվյալներ, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են Հայցվորի գործարար համբավը, Հայցվորի աշխատողների, ինչպես նաև Ընկերության տնօրեն Սմբատ Ջամալյանի պատիվն ու արժանապատվությունը։ Պատասխանողը գիտակցում է Հայցվորին հասցրած վնասի չափը և այդ վնասը ինչ-որ չափով հատուցելու համար պարտավորվում է 3 (երեք) անգամ 6 (վեց) ամսվա ընթացքում «ՆՈՎՈՅԵ ՎՐԵՄՅԱ» հասարակական-քաղաքական Անկախ Թերթում, ինչպես նաև www.nv.am կայքում վերլուծական հոդվածներ հրապարակել «Սրտի ռիթմը վարող սարքերի համաշխարհային և Հայաստանի Հանրապետության փորձի համեմատությունը» թեմայով։ Հայցվորը, միաժամանակ, պարտավորվում է սույն հաշտության համաձայնագիրը հաստատվելուց հետո նույն պահանջով և հիմքով դատարան հայց չներկայացնել։

20.	Տիգրան Արզաքանցյան (ազգային ժողովի պատգամավոր)	§Երկիր¦խմբագրություն ՍՊԸ (§Երկիր» օրաթերթ) (§Երկիր» օրաթերթի 13.01.2011թ. 3/2326 համարի ութերորդ էջում տպագրված §131 դեմք ու դիմակ¦ վերնագրով հոդվածի կապակցությամբ	11-02-2011 ԵԿԴ/0261/02/11	• 3.000.000 դրամ փոխհատուցում • 500.000 դրամ փաստաբ. վարձ. • 68,000 դրամ պետ. տուրք	**Դատաքննությունն ավարտվել է.** 19/10/2011 Վճռաբեկ դատարանի բողոքը վերադարձնելու մասին որոշումով. Առաջին ատյանի դատարանը հայցը բավարարել է մասնակի. • 200,000 դրամ փոխհատուցում վիրավորանքի դիմաց, • 80,000 դրամ փոխհատուցում փաստաբանի ծախսերի դիմաց, • 8000 դրամ պետական տուրք
21.	Մուրադ Ասրյան (փաստաբան)	Առավոտ օրաթերթ ՍՊԸ («Առավոտ» օրաթերթ) Օրաթերթի 05/02/2011թ. համարում« ինչպես նաև նույն օրը www. aravot.am կայքում հրապարակված *«Առավոտին» news. am-ին դատում են նույն բանի համար»* հոդվածի առնչությամբ:	03/03/2011 ԵԿԴ/0392/02/11	• Հերքում • 2 մլն դրամ փոխհատուցում	**Դատաքննությունն ավարտվել է** հաշտությամբ առաջին ատյանի դատարանում /դատավոր Ռ. Ներսիսյան/ 28/06/2011թ.-ին ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ (հատվածներ) Պատասխանողը մեկ օրվա ընթացքում «ԱՌԱՎՈՏ» օրաթերթի 4-րդ էջում« ինչպես նաև ինտերնետային կայքում տպագրում է հերքում հետևյալ բովանդակությամբ. «ՀԵՐՔՈՒՄ «Առավոտ» օրաթերթի 2011թ.փետրվարի 5-ի համարում« ինչպես նաև նույն օրը www. aravot.am կայքում հրապարակվել էր հոդված՝ «Առավոտին» news. am-ին դատում են նույն բանի համար»/այսուհետ՝ Հոդված/ վերնագրով: Հոդվածը գրված էր միակողմանի« քանի որ չէր ներկայացվել դատական վեճում ներգրավված կողմերից մեկի հայցվոր« փաստաբան Մուրադ Ասրյանի

					դիրքորոշումն« ավելին հայցի վերաբերյալ արտահայտված լրագրողի կարծիքը արատավորել է փաստաբանի պատիվը« արժանապատվությունը և գործարար համբավը« ինչի կապակցությամբ խմբագրությունը հայցում է փաստաբանի ներողամտությունը: Խմբագրությունն ընդունում է« որ սույն հոդվածում հեղինակի կարծիքն ու անհիմն ենթադրություններն են: «Առավոտ» թերթի խմբագրությունը պարտավորվում է այսուհետ տեղեկատվությունը պարզել հնարավոր բոլոր աղբյուրներից« իրականության չհամապատասխանող և/կամ խեղաթյուրված փաստերի վրա հիմնված տեղեկատվություն տարածելուց խուսափելու համար: «Առավոտ» օրաթերթ: 2. Հայցվորը հրաժարվում է Պատասխանողի դեմ ուղղված իր բոլոր պահանջներից:
22.	Մուրադ Ասրյան (փաստաբան)	«Մեդիա Կոնսալտ» ՍՊԸ (news.am էլեկտրոնային կայք) Էլեկտրոնային կայքում հրապարակված §Հերթական դատական հայցը անկախ լրատվամիջոցի դեմ: Անգրագիտության կատարյալ օրինակ¦ հոդվածի առնչությամբ	03-03-2011 ԵԱԴԴ/0231/02/11	• Պատասխանի հրապարակում • 2 մլն դրամ փոխհատուցում • Միջնորդել է չգանձել պետական տուրք, քանի որ իր գումարային պահանջը իրականում ոչ-նյութական բարիք է հանդիսանում	**Դատաքննությունն ավարտվել է** Վճռաբեկ դատարանի 25/05/2011 և 31/08/2011 որոշումներով՝ անընդունելի համարելով դիմումները: Հայցվորի հայցապահանջն ամբողջությամբ մերժվել է այն հիմքով, որ հայցվորը պարտավոր էր վճարել պետական տուրք 2 մլն դրամ փոխհատուցման դիմաց, որը հայցվորը հրաժարվում էր՝ գտնելով, որ դրամական փոխհատուցման պահանջը նույնական էր առաջին պահանջի՝ պատասխանի հրապարակման պահանջի հետ, հետևաբար գտնում էր, որ պարտավոր չէր վճարել պետական տուրք երկրորդ՝

					դրամական փոխհատուցման պահանջի մասով: Այս հիմնավորումը բխում էր հայցվորի այն պնդումից, որ 1087.1 հոդվածի 8-րդ մասով սահմանված դրամական փոխհատուցման պահանջը իրականում ոչ-գույքային պահանջ էր և հետևաբար գույքային պահանջի հիմքով պետական տուրք չպետք է գանձվեր:
23.	Տիգրան Արզաքանցյան (ազգային ժողովի պատգամավոր)	§Իրավունք Մեդիա¦ ՍՊԸ (§Իրավունք¦ թերթ) (§Իրավունք¦ թերթ 22.02.2011 թիվ 13 համարի երկրորդ էջի §Կլորիկ գումա՞ր է §կրվել¦¦ վերնագրով հոդվածի կապակցությամբ	22-03-2011 ԵԿԴ/0526/02/11	• 3.000.000 դրամ փոխհատուցմում • 500.000 դրամ փաստաբ. վարձ. • 68,000 դրամ պետ. տուրք	**Դատաքննությունն ավարտվել է** առաջին ատյանի դատարանի վճռով /դատավոր Ռ. Ափինյան/: Վճիռը մտել է օրինական ուժի մեջ 25/07/2011 Հայցապահանջը մերժվել է ամբողջությամբ: Կողմերը չեն բողոքարկել առաջին ատյանի դատարանի որոշումը
24.	Ռոբերտ Քոչարյան	«Հրապարակ» օրաթերթ ՍՊԸ («Հրապարակ» օրաթերթ) Օրաթերթի 12/02/2011թ. համարում հրապարակված «Քոչարյանին ոչնչացնում են, Ծառուկյանին՝ բացատրու՞մ» վերնագրով հոդվածի առնչությամբ:	25/03/2011 ԵԿԴ/0569/02/11	• Գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնել • հերքում • 3 մլն դրամ փոխհատուցում • 3 մլն դրամ փաստաբ. վարձատրություն	**Դատաքննությունն ավարտվել է** Դատարանը բավարարել է գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելու միջնորդությունը, սակայն 11/04/11 հանել է արգելանքը /դատավոր Է. Ավետիսյան/ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ (հատվածներ) 1.Պատասխանողը պարտավորվում է սույն հաշտության համաձայնությունն ուժի մեջ մտնելու օրվանից եռօրյա ժամկետում «Հրապարակ» օրաթերթում «ՀԵՐՔՈՒՄ» խորագրի ներքո տպագրել սույն հաշտության համաձայնության 2-րդ կետում նշված տեքստը՝ նույն էջում /4-րդ

					էջին, վերևի հատվածում/, որտեղ, որ 12.02.2011թ. «Հրապարակ» օրաթերթի 25 /695/ համարում տպագրվել էր «Քոչարյանին ոչնչացնում են, Ծառուկյանին՝ բացատրում» հոդվածը՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան, այն է՝ սույն հաշտության համաձայնության 2-րդ կետում նշված տեքստը տեղակայման, ձևավորման, տառատեսակի չափի ու տեսակի առումով չպետք է զիջի 12.02.2011թ. «Հրապարակ» օրաթերթի 25 /695/ համարի «Քոչարյանին ոչնչացնում են, Ծառուկյանին՝ բացատրում» հոդվածին։ 2.Հերքման տեքստը՝ «ՀԵՐՔՈՒՄ» «ՀՐԱՊԱՐԿ» ՕՐԱԹԵՐԹԻ 12.02.2011թ. 25 /695/ ՀԱՄԱՐՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ «Քոչարյանին ոչնչացնում են, Ծառուկյանին՝ բացատրում» ՀՈԴՎԱԾԻ «Հրապարակ» օրաթերթը հայտնում է, որ 12.02.2011թ.-ի 25/695/ համարում Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի մասին հրապարակած «Քոչարյանին ոչնչացնում են, Ծառուկյանին՝ բացատրում» հոդվածում տեղ գտած տեղեկությունները ամբողջությամբ չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի պատիվն, արժանապատվությունը և բարի համբավը։ «Հրապարակ» օրաթերթը հայցում է ներողամտություն 12.02.2011թ.-ի 25/695/ համարի նշված հոդվածում տեղ գտած անճշտությունների և վիրավորանքների համար։ 3. Պատասխանողը պարտավորվում է

					սույն հաշտության համաձայնության 1-ին և 2-րդ կետերի պահանջները կատարել բարեխղճորեն, այն է հերքման տեքստը տեղադրելիս լրացուցիչ մեկնաբանություն չկատարել, ինչպես նաև հերքման տեքստի և դրա հրապարակման հետ կապված հետագայում բացասական մեկնաբանություն չկատարել։ 4. Կողմերը հայտարարում են, որ միմյանց նկատմամբ որևէ այլ պարտք ու պահանջ չունեն /այդ թվում՝ դատական ծախսերի հետ կապված/, բացառությամբ սույն համաձայնության մեջ նշվածի։ 5. Հայցվորը հրաժարվում է Պատասխանողի նկատմամբ իր մյուս պահանջներից։ 6.Դատական ծախսերի հետ կապված հարցը համարվում է լուծված։ 7.Սույնով կողմերը հրաժարվում են վերաքննության իրավունքից։ … …11. Սույն հաշտության համաձայնությունն ուժի մեջ է մտնում դատարանի կողմից հաստատվելու դեպքում՝ վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից։ …
25.	ՓարավոնՄիրզոյան (Ազգային պատկերասրահի տնօրեն)	«Կողմնակի անձանց Մ» ՍՊԸ («Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթ) և Սերգեյ Գասպարյան (լրագրող չի հանդիսանում) 09/04/2011թ. «Ճանաչել Փարավոնին» հոդվածի առնչությամբ:	20-04-2011 ԵԿԴ/0783/02/11	• Հերքում • 1 մլն դրամ վիրավորանքի դիմաց փոխհատուցում • 2 մլն դրամ զրպարտության դիմաց փոխհատուցում • 300,000 փաստաբանի վարձատրություն • 60,000 պետ. տուրք	Դատաքննությունն ավարտվել է առաջին ատյանի դատարանում, հայցն ամբողջությամբ մերժվել է: Վերաքննիչ բողոք չի ներկայացվել, դատաքննությունն ավարտվել է 30/11/2012թ.-ին:

26.	Հայկ Բաբուխանյան (ՍԻՄ նախագահ)	Խմբագիր ՍՊԸ (www.report.am էլեկտր. էջը) և Էդիկ Անդրեասյան (լրագրող-վերլուծաբան) Աբել Միքայելյան (լրագրող) Վիճարկվում է Report.am» կայքէջում հրապարակված §Երբ զոռով հուշում են անհուշելին¦ 25/03/2011թ.-ին հրապարակված հոդվածի հրապարակային հայտարարությունները	21-04-2011 ԵԿԴ/0790/02/11	• ներողություն խնդրել • հրապարակել վճիռը, • 1 մլն դրամ փոխհատ. • 8,000 դրամ պետ տուրք • Փաստաբ. ծախսերը	**Դատաքննությունն ավարտվել է:** Առաջին ատյանի դատարանը 12/03/12 կայացրել է վճիռ՝ ամբողջությամբ մերժելով հայցապահանջը Վճիռը չի բողոքարկվել
27.	Մարգարիտա Խաչատրյան («Ջինվոր» ՀԿ-երի համագործակցության իրավապաշտպան համակարգող խորհրդի նախագահ)	Հրապարակ օրաթերթ ՍՊԸ («Հրապարակ» օրաթերթ) 21/04/2011թ.-ի Հրապարակ օրաթերթի 73/684/ համարում հրապարակված «Ծեծկռտո՞ւք է եղել» հոդվածի առնչությամբ:	26/04/2011 ԵԿԴ/0807/02/11	• հերքում	**Դատաքննությունն ավարտվել.** Առաջին ատյանի դատարանը մերժել է հայցը 30.07.2012թ.-ին: Վերաքննիչ դատարանը բեկանել է վճիռը և կայացրել նոր որոշում: Վճռաբեկ դատարանը բեկանել է վերաքննիչ դատարանի որոշումը և կայացրել նոր որոշում՝ ամբողջությամբ բավարարելով բողոքը և ուժ տալով առաջին ատյանի դատարանի որոշմանը:
28.	Երևանի պետական համալսարան ՊՈԱԿ և Երևանի պետական համալսարանի	«Բանաձև» ՍՊԸ և Սիրեկան Եղիազարյանի (Հանրային հեռուստատեսության	22/06/2011 ԵԿԴ/1299/02/11	• ներողություն խնդրել ԵՊՀ-ից և քրեական իրավունքի ամբիոնի վարիչ Արա Գաբուզյանից	Դատաքննությունն ավարտվել է 06/02/2013թ. վճռաբեկ դատարանի բողոքը հետ վերադարձնելու մասին որոշումով: Վերաքննիչ դատարանը 23/11/2012թ. կայացրել է հետևյալ որոշումը. §Մասնակի բեկանել և փոփոխել ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ

	իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի դասախոս Արա Գաբուզյան	Բանաձև հաղորդաշար) «Բանաձև»ՍՊԸ կողմից Պատրաստած և հեռարձակված «Ականատես» հաղորդման [«Իրավախախտ իրավագետը»](#) վերնագրով պատմությամբ ներկայացված տեղեկությունների համար:		`տեղադրելով տեսանյութը նաև հաղորդաշարի ինտերնետային կայքում և YouTube-ում, • հրապարակել դատարանի վճիռը	վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԴ/1299/02/11 քաղաքացիական գործով 30.07.2012 թվականին կայացրած վճիռը. <<Երևանի պետական համալսարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության, Արա Գաբուզյանի հայցն ընդդեմ <<Բանաձև>> սահմանափակ պատասխանատվության ընկերության, Սիրեկան /Սիրակ/ Եղիազարյանի, Սոնա Հարությունյանի բավարարել մասնակի. ա/ Պարտավորեցնել Սիրեկան /Սիրակ/ Եղիազարյանին և <<Բանաձև>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը՝ վերջինի կողմից պատրաստված և Հայաստանի Հանրային հեռուստարնկերության Հ1 հեռուստաալիքով 28.05.2011 թվականին հեռարձակված <<Ականատես>> հաղորդաշարի ընթացքում <<Երևանի պետական համալսարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործարարահամբավն արատավորող արտահայտությունների համար դատարանի վճռի օրինականության մեջ մտնելուն հաջորդող հաղորդման ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում դատարանի վճռի օրինականության մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում զանգվածային լրատվության այլ միջոցներով /պաշտոնական մամուլ/ հրապարակային ներողություն խնդրել <<Երևանի պետական համալսարան>> պետական ոչ առևտրային կազմակերպությունից: բ/ Պարտավորեցնել Սիրեկան /Սիրակ/ Եղիազարյանին և <<Բանաձև>> ՍՊ ընկերությանը ԵՊՀ <<Քրեական իրավունք>>-ի ամբիոնի վարիչ Արա Գաբուզյանից՝ Հայաստանի Հանրային հեռուստարնկերության Հ1 հեռուստաալիքով 28.05.2011 թվականին հեռարձակված <<Ականատես>> հաղորդաշարի ընթացքում վերջինիս պատվը, արժանապատվությունը և գործարարահամբավը արատավորող արտահայտությունների համար դատարանի վճռի օրինականության մեջ մտնելուն հաջորդող հաղորդման ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում դատարանի վճռի օրինականության մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում զանգվածային լրատվության այլ միջոցներով

					/պաշտոնական մամուլ/ հրապարակային ներողություն խնդրել Երևանի պետական համալսարանի <<Քրեական իրավունք>>-ի ամբիոնի վարիչ Արա Գաբուզյանից: գ/ Պարտավորեցնել Սիրեկան /Սիրակ/ Եղիազարյանին <<Բանաձև>> սահմանափակ պատասխանատվություն ամբոնկերության կողմից պատրաստվող Հայաստանի Հանրային հեռուստարնկերության Հ1 հեռուստաալիքով հեռարձակվող «Անանատես» հաղորդաշարի դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելուն հաջորդող հաղորդման ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում զանգվածային լրատվության այլ միջոցներով /պաշտոնական մամուլ/ հերքել ԵՊՀ <<Քրեական իրավունք>>-ի ամբիոնի վարիչ Արա Գաբուզյանի վերաբերյալ զրպարտությունը համարվող հետևյալ փաստացի տվյալները Նրանք ասում են. <<Մենք աշխատում ենք ծավալի վրա, մեզ բովանդակությունը չի կարևոր>>, <<ուստմասնագետների իմ գրավոր աշխատանքն ավելի քան հինգ միավոր էր և ավելի քան ութ միավոր էր>>, դ/ Պարտավորեցնել <<Բանաձև>> սահմանափակ պատասխանատվություն ամբոնկերությանն իր իսկ կողմից պատրաստվող Հայաստանի Հանրային հեռուստարնկերության Հ1 հեռուստաալիքով հեռարձակվող <<Անանատես>> հաղորդաշարի դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելուն հաջորդող հաղորդման ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում և զանգվածային լրատվության այլ միջոցներով /պաշտոնական մամուլ/ հերքել ԵՊՀ <<Քրեական իրավունք>>-ի ամբիոնի վարիչ Արա Գաբուզյանի վերաբերյալ զրպարտությունը համարվող հետևյալ փաստացի տվյալները <<Մայր բուհում դիմորդի գրավոր անբավարար են գնահատել առանց բովանդակությունը ստուգելու՝ միայն ծավալին նայելով>>,

					<<Քննության արդյունքի մասին բացատրություն ստանալու փոխարեն Սիրակը լսում է. <<Կարևորը գրավորի ծավալն է, թե քանի էջ եսլցրել >>, <<Խնդրի լրջությունը գնահատակաանից հեռու է գնում. իրավաբանները ակնհայտկասկածունեն, որ գործը կոռուպցիոն ռիսկերունի: Դիմումենը կրթության գիտության նախարարությունը, որ գործն ուսումնասիրեն և հավանական կոռուպցիանկանխեն...□ Թաքնված կոռուպցիայի կասկածհայտնումէ ոչ թե սովորականմի երիտասարդ, այլ իրավաբանականմի ամբողջ խումբ...□ Սխալներգտնելուհամար նախարարությունը նայեցամենտեղ, բացի այնտեղից, որտեղսխալներ հաստատկգտներ >> <<Պատմությունը մեկդասախոսի կամ մեկ ամբիոնի սխալնէ >> դ/ Պարտավորեցնել <<Բանաձև >> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ինտերնետայինկայքի սկզբի էջումերևացող վայրում, ինչպես նաև http□//akanates.banadzev.com ինտերնետայինկայքի սկզբի և 28.05.2011թ. հաղորդման էջերումերևացող վայրում հրապարակել դատարանի վճիռը՝ նշումով <<ք. Երևան, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճռով պարտավորեցվել է <<Բանաձև >> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և Սիրակ Եղիազարյանին ներողություն խնդրել <<Երևանի պետական համալսարան >> պետական ոչ առևտրայինկազմակերպությունից և ԵՊՀ <<Քրեական իրավունք >>-ի ամբիոնի վարիչ Արա Գաբուզյանից և հերքել վերջիններիս վերաբերյալ զրպարտությունը համարվող փաստացի տվյալները «Իրավախախտիրավագետ >> հաղորդման ընթացքում հնչեցված վիրավորանքի և զրպարտության համար: Ներկայացվում է դատական ակտի ամբողջական տեքստը: 2.Վճիռը մնացածմասով թողնել օրինականուժի մեջ:
29.	Սուսաննա Նազարյան (Էջմիածնի թիվ 2 ավագ դպրոցի նախկին տնօրեն)	168 ժամ ՍՊԸ և լրագրող Մարինե Մարտիրոսյան	13/07/2011 ԵԿԴ/1484/02/11	• Հերքում, • 2 մլն դրամ փոխհատ.	Գործի վարույթը կասեցվել է առաջին ատյանի դատարանում 15/11/2011թ.-ին քրեական այլ գործով վարույթի ընթացքի մեջ գտնվելու կապակցությամբ:

		(§168 ժամ՝ օրաթերթի 26/05/2011թ. հրապարակված «Տնօրենը ԿԳՆ-ին դատի է տվել» հոդվածի առնչությամբ:			/դատավոր Արայիկ Մելքումյան/
30.	Տիգրան Տերտերյան (Էջմիածնի թիվ 2 ավագ դպրոցի նախկին տնօրենի անչափահաս որդին)	168 ժամ ՍՊԸ և լրագրող Մարինե Մարտիրոսյան (§168 ժամ՝ օրաթերթի 26/05/2011թ. հրապարակված «Տնօրենը ԿԳՆ-ին դատի է տվել» հոդվածի առնչությամբ:	13/07/2011 ԵԿԴ/1485/02/11	• Հերքում • 2 մլն փոխհատ. • Արգելանք գույքային կամ ֆինանսական միջոցների վրա	**Դատաքննությունն ավարտվել է:** Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 2012 թ. ապրիլի 13-ին հրապարակել է վճիռը՝ ամբողջությամբ մերժելով հայցը: Վճռվել է Տիգրան Համլետի Տերտերյանից՝ ի դեմս օրինական ներկայացուցիչներ Համլետ Տերտերյանի ու Սուսան Նազարյանի, հօգուտ ՀՀ պետբյուջեի, բռնագանձվել 36 հազար ՀՀ դրամ՝ որպես նախապես չվճարված, դատարանի որոշմամբ վճարումը հետաձգված, օրենքով սահմանված չափով վճարման ենթակա պետական տուրքի գումար: Դատական ակտը չի բողոքարկվել եւ ստացել է օրինական ուժ:
31.	«Իջեւանի ՃՇՇ» ճանապարհաշինական ՓԲԸ	Իջևան ստուդիա ՍՊԸ (Իջևան հեռուստաընկերություն) և Նաիրա Խաչիկյան (լրագրող) 2011թ. հունիսի 21-ին Հ2 հեռուստաալիքի «Լրաբեր» լրատվական ծրագրով, ինչպես	19/07/2011 ՏԴ1/0177/02/11	• Ներողություն խնդրել • 3 մլն դրամ փոխհատուցում • 200,000 փաստաբ. • 64.000 պետտուրք • արգելանք գույքի և ֆինանսական միջոցների վրա	**Դատաքննությունն ավարտվել է:** Վերաքննիչ դատարանի կողմից 04/07/2012թ. գործը բեկանելու մասին որոշումից հետո առաջին ատյանի դատարանը մերժել է հանցապահանջը, սակայն պատասխանողի համար հայցվորին փոխհատուցելու մասին որոշում է կայացրել: Այդ որոշումը բողոքարկվել է պատասխանող

		նաեւ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությամբ մի քանի անգամ հեռարձակվել են տեսանյութեր, որոնց մեջ տեղ են գտել «Իջեւանի ՃՇՇ»-ի գործարար համբավը արատավորող արտահայտություններ: Դրանք են՝ «գործարար դիմակի տակ իսկական ավերողներ են թաքնված, մի պարզ անվամբ՝ Իջեւանի ճանշին ձեռնարկություն», «քանդել եւ սալահատակը ծածուկ վաճառել է», «Իջեւանի ճանշինի թեթեւ ձեռքով վաճառվել են», «մասնագիտական որակի եւ անաչառության պակասն է, որ ծնել է նման հետեւանքներ» եւ այլ որակումներ: Ցուցադրված տեսանյութերի ավարտին նշվել է՝ «Նաիրա Խաչիկյան, Արմեն Ասատրյան, Իջեւանի հեռուստաընկերությունից «Լրաբերի» համար:			լրատվամիջոցի կողմից, սակայն 26/06/2013թ. Վերաքննիչ դատարանը ուժի մեջ է թողել առաջին ատյանի դատարանի որոշումը, իսկ Վճռաբեկ դատարանը վերադարձրել է բողոքը:
32.	«Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արման Ավետիսյան	«Ժուռնալիստների ասպարեզ ակումբ» ՀԿ-ի նախագահ Լեվոն Բարսեղյան[1]	09/08/2011 ՇԴ/1469/02/11	• ներողություն խնդրել • հերքում • 500,000 մլն դրամ վիրավորանքի դիմաց • 1,5 մլն դրամ զրպարտության դիմաց • 200,000 փաստաբանի վարձատրություն	**Դատաքննությունն ավարտվել է** Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանը մերժել է հայցը վաղեմության ժամկետի խախտումով բերված լինելու հիմքով: Վերաքննիչ բողոքը մերժվել է:

[1] Բացառության կարգով որոշվել է այս դատական գործը համարել որպես լրատվամիջոցների դեմ բերված դատական գործ և ընդգրկվել է ցուցակում:

33.	Պարույր Հայրիկյան (ԱԻՄ կուսակցության առաջնորդ)	«Հրապարակ» օրաթերթ ՍՊԸ («Հրապարակ» օրաթերթ) և Գեղամ Գալստյան Նորիկ Պողոսյան (կոմունիստական կուսակցության անդամներ) «Հրապարակ» օրաթերթում 14.07.2011թ. հրապարակված «Աղվեսը՝ հավերին պահապան» վերնագրով հոդվածի կապակցությամբ, որտեղ հոդվածի հեղինակներ են՝ Գ. Գալստյանը և Ն. Պետրոսյանը։	16-08-2011 ԵԿԴ/1762/02/11	• հերքում	**Դատաքննությունն ավարտվել է** Հրապարակի դեմ հայցի մասով, քանի որ դատաքննության ընթացքում հայցվորը հրաժարվել է օրաթերթի դեմ հայցապահանջից։ Առաջին ատյանի դատարանը հայցը բավարարել է մասնակի. (19/12/2011 վճռով Կենտրոն առաջին ատյանի դատարանը /դատավոր Ալեքսեյ Արշալույսի Սուքոյան) • Տպագրել Վճռի եզրափակիչ մասը խորագրով հոդվածի տեղեկատվությանը։
34.	Գուրգեն Աղաջանյան (քաղաքացի)	Ժողովուրդ թերթի խմբագրություն ՍՊԸ (Ժողովուրդ օրաթերթ) §Ժողովուրդ¦ օրաթերթի 09/08/2011թ. թիվ 131 համարում հրապարակված §Գալուստի որդուց պահանջում են¦ հոդվածի կապակցությամբ, որում հրապարակվել էր նամակ ենթադրաբար հայցվորի անունից ընդդեմ ՀՀ Պետական գույքի կառավարման վարչության նախկին պետ, Հայաստանի Հանրապետական	24-08-2011 ԵԿԴ/1869/02/11	• Հերքում • 500,000 դրամ փոխհատուցում զրպրատության դիմաց • 300,000 փաստաբանի վարձատրություն • 4,000 դրամ պետ տուրք	Ընթացիկ Կենտրոն դատարան /դատավոր Արայիկ Մելքոնյան/ մերժել է հայցը 19/03//2013-ին։ Վերաքննիչ դատարանը վճիռը բեկանել է ու ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության։

		կուսակցության անդամ Կարինե Կիրակոսյանի և նույն վարչության պետի ներկայիս տեղական Աշոտ Մարկոսյանի մասին սակայն որը հայցվորը պնդում է, որ ինքը չի ուղարկել:			
35.	Միսակ Մարտիրոսյան (Դատական դեպարտամենտի ղեկավար)	«Հրապարակ» օրաթերթ ՍՊԸ («Հրապարակ» օրաթերթ) «Հրապարակ» օրաթերթում 11.08.2011 թվականին «Դատական դեպարտամենտը» «Միսակնոց»» և 2011 թվականի օգոստոսի 12-ին «Դատական դեպարտամենտը «Միսակնոց»–2»» վերնագրերով հոդվածների առնչությամբ:	30-08-2011 ԵԿԴ/1933/02/11	• Վճռի հրապարակում օրաթերթում և www.hraparak.am կայքէջում • 1 մլն դրամ փոխհատուցում վիրավորանքի դիմաց • 2 մլն դրամ փոխհատուցում զրպարտության դիմաց •	**Դատաքննությունն ավարտվել է** 04/11/2011թ.: Կողմերը կնքել են Հաշտություն: ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ (հատվածներ) 1. «Հրապարակի» հետաքննության արդյունքում պարզվել է« որ նամակում նշված փաստական հանգամանքները չեն համապատասխանում իրականությանը« իսկ դրված միակ ստորագրությունը կեղծ է: 2. "Հրապարակ օրաթերթ" ՍՊԸ-ն ցավում է« որ դրսևորել է շտապողականություն« որի արդյունքում նշված նամակում արված որոշ արտահայտություններ« որոնք տպագրվել են օրաթերթում« չեն համապատասխանել իրականությանը և արատավորել են հայցվորի ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավար Միսակ Մարտիրոսյանի պատիվն ու արժանապատվությունը՝ զրպարտել և վիրավորել են նրան: 3. Հայցվորը հրաժարվում է թիվ ԵԿԴ/1933/02/11 քաղաքացիական գործով Պատասխանողի նկատմամբ իր նյութահիրավական և այլ պահանջներից: 4. Պատասխանողը դատական ակտն

					օրինական ուժի մեջ մտնելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում« սույն հաշտության համաձայնության տեքստը հրապարակում է "Հրապարակ" օրաթերթում՝ անոնսը (տեքստի համառոտագիրը) տպագրելով առաջին էջի վրա։ 5. Պատասխանողը պարտավորվում է վճիռն ուժի մեջ մտնելուց հետո փոխհատուցել միայն հայցվորի վճարված պետական տուրքը /64000 ՀՀ դրամ/:
36.	Արամ Չատինյան Արաբկիրի կադաստրի պետի տեղակալ	Գագիկ Շամշյան 24.08.2011թ.-ի aravot.am կայքում հրապարակված ««Վերեվները» հույսերը չարդարացրին» հոդվածի համար, որտեղ նշվել է, որ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության (6-րդ վարչություն) աշխատակիցները Թումանյան-Հյուսիսային պողոտա փողոցների խաչմերուկից բերման էին ենթարկել միջպետական հետախուզման մեջ գտնվող 40-ամյա Տիգրան Չատինյանին, որը հանդիսանում է Արաբկիրի կադաստրի պետի տեղակալ Արամ Չատինյանի եղբայրը:	05/09/2011 ԵԱՔԴ/1751/02/11	• Հերքում • 1 դրամ փոխհատուցում	**Դատաքննությունն ավրատվել է.** Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 29/03/2012թ. վճռով կարճել է գործը, քանի որ հայցվորը դիմում է ներկայացրել դատարան՝ հայցից հրաժարվելու և քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին: Դատարանը բավարարել է դիմումը և որոշել կարճել գործը: ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՀՈՒՆԱՆՅԱՆ
37.	Վանո Եղիազարյան (Լոռու մարզի Լեռնապատ գյուղի գյուղապետ)	«Հետք» շաբաթաթերթի լրագրող Ադրինե Թորոսյան 2011թ. օգոստոսի 23-ին «Հետք» շաբաթաթերթում տպագրված՝ «Գյուղապետի հասցեին ասված	05/09/2011 ԼԴ/0628/02/11	• Հերքում • Ներողություն խնդրել • 1 մլն դրամ փոխհատուցում վիրավորանքի	**Դատաքննությունն ավարտվել է:** 2012 թ. մայիսի 29-ին Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը հայցը մերժել է

		«արածել» բառն արժե 1 միլիոն դրամ» վերնագրով հոդվածում տեղ գտած տեղեկատվության համար		դիմաց, այնուհետև պահանջն փոխել է 1 լումա	ամբողջությամբ: /դատավոր Վ. Հովնանյան/ Դատարանի որոշմամբ հայցվորից բռնագանձվել է 150,000 դրամ: Վճիռը չի բողոքարկվել 24-08-2012 –ի դրությամբ գործը հանձնվել է արխիվ
38.	Թերեզա Շահվերդյան Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության ամբիոնի դեկան	«Հետք» շաբաթաթերթի լրագրող Ադրինե Թորոսյան 2012թ. մայիսի 13-ին «Հետք» թերթում տպագրված «Հիվանդագին կրքեր Վանաձորի մանկավարժական ինստիտուտում» վերնագրով հոդվածում կատարված արտահայտությունների հիմքով	08-09-2011 ԼԴ/0656/02/11	• 2 մլն դրամ զրպարտության դիմաց, որն այնուհետև նվազեցրել է մինչև 200,000 դրամ • ներողություն խնդրել • հերքում	**Դատաքննությունն ավարտվել է:** Հայցվորը 24/10/2012թ. հրաժարվել է հայցից: Լոռու մարզի առաջին ատյանի դատարանում /դատավոր Գ. Գրիրգորյան/
39.	Արմավիա ավիաընկերություն ՍՊԸ	«Կողմնակի անձ Մ» ՍՊԸ Չորրորդ իշխանություն	17/09/2011 ԵԿԴ/2231/02/11	• Հերքում • 2 մլն դրամ փոխհատուցում	**Դատաքննությունն ավարտվել է** հաշտությամբ. առաջին ատյանի Կենտրոն դատարանում /դատավոր Ռ. Ափինյան/ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ 15 դեկտեմբերի 2011թ. (հատվածներ) 1. Պատասխանողը պարտավորվում է սույն՝Հաշտության համաձայնությունը՝ հաստատող դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսյա ժամկետում՝Չորրորդ ինքնիշխանություն՝ օրաթերթի հերթական համարում հրապարակել՝Հերքում՝՝ հետևյալ բովանդակությամբ.

					ՀԵՐՔՈՒՄ ՝Չորրորդ ինքնիշխանություն՝ օրաթերթի 15.09.2011թ. թիվ 413-րդ համարի 6-րդ էջում հրապարակված ՝ԱՐՄԱՎԻԱ՞Ն Է ԶԵՆՔ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼ՝ վերնագրով հոդվածում նշվել էր. ՝Զենքերի հերթական բաժինը վերցնելու և վերադառնալու նպատակով Լիբիայից Մոլդովա ժամանած ԻԼ-76 ինքնաթիռը պատկանում է՝Հայկական քաղաքացիական ավիաընկերությանը՝: Այս մասին հայտարարել է Մոլդովայի ազգային բանակի հրամանատար, գեներալ Յուրի Դոմինիկը: Հայաստանի քաղաքացիական ավիացիայի մամլո քարտուղար Նելլի Չերչինյանը հայտնել է Epress.am-ին, որ՝այս հարցի առնչությամբ մեկնաբանություն կարող է տալ միայն՝Արմավիան՝: ՝Արմավիա՝ ավիաընկերության մամլո քարտուղար Նանա Ավետիսովան հեռախոսազանգին չի պատասխանել: Գեներալ Դոմինիկը հաստատել է այն փաստը, որ փոխադրողի համար գաղտնիք չի եղել, թե ուր է ուղղվում զենքը: ՝Ինտերֆաքսը՝ նշել է, որ Քիշնևը լիբիական կողմին հին, ժամկետանց զենք է վաճառել՝: Հոդվածի երկրորդ նախադասության կեսից պատկերված էր՝Արմավիա՝ Ավիաընկերություն ՍՊԸ-ին պատկանող օդանավը՝ թռիչքի պահին: Նշված տեղեկատվության վերաբերյալ մամուլում հրապարակված հոդվածների, ինչպես նաև՝Արմավիա՝ Ավիաընկերություն ՍՊԸ-ի կողմից

					ներկայացրած փաստերի ուսումնասիրությունից հետևում է, որ վերոնշյալ հոդվածում հրապարակված տեղեկատվությունն՝Արմավիա՝ Ավիաընկերություն ՍՊԸ-ին վերաբերող մասով իրականությանը չի համապատասխանում, և,՝Արմավիա՝ Ավիաընկերություն ՍՊԸ-ն վերոնշյալ հոդվածում նշված զենքի մատակարարման /տեղափոխման/ հետ որևէ առնչություն չունի՝: 2.՝Արմավիա՝Ավիաընկերություն ՍՊԸ հրաժարվում է 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամի չափով փոխհատուցում վճարելու պահանջից: 3. Կողմերը… դատարանին խնդրում են հաստատել սույն՝Հաշտության համաձայնությունը՝և այդ հիմքով թիվ ԵԿԴ/2231/02/11 քաղաքացիական գործի վարույթը կարճել:
40.	Արթուր Գրիգորյան (փաստաբան)	«Հրապարակ» օրաթերթ ՍՊԸ («Հրապարակ» օրաթերթ) (www.hraparak.am կայքում 2011թ. օգոստոսին տեղադրված քոմենթների կապակցությամբ)	27/09/2011 ԵԿԴ/2309/02/11	• 18 մլն դրամ փոխհատուցում	**Դատաքննությունն ավարտվել է** Հայցադիմումը վերադարձվել է 30/09/2011, քանի որ ստորագրված չի եղել հայցվորի կողմից Նոր հայցադիմում չի ներկայացվել Գործը հանձնվել է դատարանի արխիվ
41.	Բենիկ Հարությունյան (ՀՀ-ում ֆիզիկական առողջության պաշտպանման կենտրոնի տնօրեն, ՀՀ Պաշտպանության	Ժողովուրդ թերթի խմբագրություն ՍՊԸ (Ժողովուրդ օրաթերթ) «Ժողովուրդ» օրաթերթը	10-10-2011 ԵԿԴ/2427/02/11	• Հերքում • 2.2 մլն դրամ փոխհատուցում	**Դատաքննությունն ավարտվել է:** Հայցվորը հրաժարվել է հայցապահանգից 20.04.2012թ. ք.Երևան Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական

	նախարարի խորհրդական)	15/09/2011թ. 151-րդ համարում հրապարակել է ԱՄՆ քաղաքացի Նունե Սերոբյանի ներկայացրած բողոքը այն մասին, որ հայցվորը իրեն պարտավոր է փոխհատուցել դատարանով որոշված 295,000 ԱՄՆ դոլար, սակայն դա չի անում: Օրաթերթը նույն հրապարակման մեջ ներկայացրել է նաև Բ. Հարությունյանի և նրա փաստաբանի պարզաբանումները: Այդուհանդերձ, Բ. Հարությունյանը դիմել է դատարանը՝ հայտարարելով, որ ամբողջ հոդվածը զրպարտություն է և վիրավորանք:			շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը կայացրել է վարույթը կարճելու մասին որոշում Հայցվորը տարածել է հետևյալ հայտարարությունը. *«Ժողովուրդ» օրաթերթում 2011թ. սեպտեմբերի 9-ին տպագրված «Դոկտոր, պրոֆեսորի արկածները ոսկու հանքերում» հոդվածի պատճառով բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բենիկ Հարությունյանի և «Ժողովուրդ» օրաթերթի միջև ծագած վեճի հանգուցալուծման կապակցությամբ հայտարարություն* *Արժևորելով մամուլի զարգացումը որպես ժողովրդավար պետության կերտման կարևոր բաղադրիչ՝ Բենիկ Հարությունյանը ՀՀ պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Դավիթ Կարապետյանի միջնորդությամբ հրաժարվում է «Ժողովուրդ» օրաթերթի նկատմամբ ներկայացրած դատական հայցից և որպես փոխհատուցում 2 միլիոն 200 հազար դրամի պահանջից:*
42.	Նվեր Պողոսյան (Գեղարքունիքի մարզպետ)	«Ժողովուրդ» թերթի խմբագրություն ՍՊԸ («Ժողովուրդ» օրաթերթ) Օրաթերթի 07/10/2011թ. թիվ 171 համարում հրապարակված հոդվածի առնչությամբ, որում մեջբերվել էին Թթուջուր գյուղի դպրոցի պատմության ուսուցիչ, մրցույթի մասնակից Աննա Թորոսյանի խոսքերը:	11-10-2011 ԳԴ/0241/02/11	Դատարանում պահանջում է. • Հերքում • 2.5 մլն դրամ փոխհատուցում Բերվել է հակընդեմ հայց պատասխ. կողմից հետևյալ պահանջով. • Նվեր Պողոսյանից հօգուտ	**Դատաքննությունն ընթացքի մեջ է:** Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանը/ դատավոր Ա. Թամրազյան/ 12/03/2012թ. կայացրել է վճիռ. Բավարարել է մասնակի • տպագրել հերքում • 100,000 դրամ փոխհատուցում վիրավորանքի/զրպ. Համար • 100,000 դրամ փոխհատուցում փաստաբանի վարձատր.

				§Ժողովուրդ օրաթերթի խմբագրություն¦ՍՊԸ-ի 1 լումա բռնագանձելու, Նվեր Պողոսյանին պարտավոեցնելու մամուլի լրատվամիջոցներում տպագրել ու"Ես Նվեր Պողոսյանս ներողություն եմ խնդրում ,"Ժողովուրդ" օրաթերթի խմբագիր Թագուհի Թովմասյանից և աշխատակազմից՝ նրանց պատիվը,արժանապատվությունը և գոծարար համբավն արատավորելու համար "	06/09/2012թ. Վերաքննիչ դատարանը մերժել է վերաքննիչ բողոքը: Վճռաբեկ դատարանը 21/11/2012թ. վերադարձրել է բողոքը:
43.	Արթուր Գրիգորյան (փաստաբան)	«Հրապարակ» օրաթերթ ՍՊԸ («Հրապարակ» օրաթերթ)	17/10/2011 ԵԿԴ/2491/02/11	18 մլն դրամ ոչ-նյութական վնասի դիմաց փոխհատուցում – 250,000 դրամ յուրաքանչյուր ամիս 6 տարվա ընթացքում	**Դատաքննությունն ավարտվել է** Կիրառվել է արգելանք գույքի/դրամական միջոցների վրա, որն այնուհետև վերացվել է և արգելանքի միջոցը թողնվել է միայն գույքի վրա: 07/03/2012թ. առաջին ատյանի դատարանը կայացրել է վճիռ՝ ամբողջությամբ մերժելով հայցապահանջը: 06/06/2012 վճռաբեկ դատարանը մերժել է

					հայցը:
44.	Հայաստանի ավետարանական հավատքի քրիստոնյաների Կյանքի խոսք եկեղեցի կրոնական կազմակերպություն և Արթուր Սիմոնյան	Իրավունք Հետաքննություն շաբաթաթերթ և Արգումենտի նեդելի վ Առմենիի շաբաթաթերթ «Իրավունք-Հետաքննության» թիվ 39-ում տպագրված կոլլաժի և նրան ուղեկցող հրապարակման կապակցությամբ:	18/11/2011 ԵԿԴ/2840/02/11	• ներողություն խնդրել, • հերքում, • 19,000 դրամ փոխհատուցում ծախսերի դիմաց	**Դատաքննությունն ընթացքի մեջ է:** Հայցը մերժվել է առաջին ատյանի դատարանում և վերաքննիչ դատարանում: 16/01/2013թ-ին վերադարձվել է վճռաբեկ բողոքը:
45.	Հայռուսգազարդ ՓԲԸ	«Կողմնակի անձ Մ» ՍՊԸ Չորրորդ իշխանություն	08/12/2011 ԵԿԴ/3038/02/11	• հերքում • 2 մլն դրամ փոխհատուցում	**Դատաքննությունն ավարտվել է.** Հայցվորը հետ է վերցրել դիմումը 12/12/2011թ.-ին՝ հայցապահանջը ներկայացնելուց չորս օր հետո:
46.	Դանիել Իոաննիսյան Բայանդուր Պողոսյան Հասմիկ Սիմոնյան	§Մեկ Ազգ¦ կուսակցություն	31/01/2012 ԵԱԴԴ/0074/02/12	• ներողություն խնդրել • փոխհատուցում ընդհանուր առմամբ 50 դրամ՝ յուրաքանչյուրի • ծախսերի դիմաց 10050 դրամ:	**Դատաքննությունն ավարտվել է** 28/06/2012.թ առաջին ատյանի դատարանը բավարարել է հայցապահանջը մասնակի, պարտավորեցրել է ներողություն խնդրել և տեքստը տեղադրել կուսակցության ելեկտրոնային էջում
47.	ՍԱՍ-ԳՐՈՒՊ ՍՊԸ	Արամ Անտինյան Blognews.am կայքի տնօրեն	20-03-2012	• 2 մլն դրամ գործարար	**Դատաքննությունն ավարտվել է**

			ԵԱՔԴ/0395/02/12	համբավի դիմաց • 200,000 դրամ փաստաբանի վարձատրության դիմաց	07/05/2012թ. Կենտրոն դատարանը կարճել է գործը, քանի որ հայցվորը հրաժարվել է հայցից
48.	Անդրանիկ Հովհաննիսյան	"Արմենիա" Թիվի "Ժամը" լրատվական հեռուստաձրագիր	10-04-2012 ԵԱԴԴ/0348/02/12	• 2950000 վիրավորանքի և զրպարտության դիմաց	**Դատաքննությունն ավարտվել է: (դռնփակ դատական նիստ)** Աջափնյակ և Դավիթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը 21/06/2013թ. Վճռել է պարտավորեցնել Արմենի Թի-Վի ՓԲԸ տարածել հերքում և բռնագանձել 55000 ՀՀ դրամ, որից 50000 ՀՀ դրամը որպես վիրավորանքի համար փոխհատուցման գումար, 5000 ՀՀ դրամը որպես նախապես վճարված պետական տուրքի գումար: Հայցն ընդդեմ՝Արմենիա Թի-Վի՝ փակ բաժնետիրական ընկերության 2950000 ՀՀ դրամ փոխհատուցում վճարելու պահանջի մասով, մերժել: Վարույթն ընթացքի մեջ է վերաքննիչ դատարանում
49.	Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպությունն	«Զարուհի հրատարակչական տուն» ՍՊԸ և Ռուսլան Թաթոյանի	25-04-2012 ԵԱՔԴ/0642/02/12	• հրապարակային ներողություն խնդրել • վճիռը հրապարակել www.zaruhi.com կայքում • վճարել փոխհատուցում 500.000 ՀՀ դրամի չափով:	Դատաքննությունն ավարտվել է: Առաջին ատյանի դատարանը մասնակի բավարարել է, սակայն վերաքննիչ դատարանը բավարարված մասով բեկանել ու մերժել է բողոքը: Վճռաբեկ դատարանը վերադարձրել է բողոքը: Այսպիսով, հայցն ամբողջությամբ մերժվել է:
50.	Ռուզաննա Ազիզյան Մոնթե Մելքոնյանի թիվ 11 դպրոցի տնօրեն	<<Յոթ օր>> լրատվական ծառայություն	26-04-2012 ԵՇԴ/0325/02/12	• 300.000 դրամ վիրավորանքի և զրպարտության դեմ, • 100.000 դրամ	**Դատաքննությունն ավարտվել է** Դատական գործը կարճվել է Շենգավիթի դատարանի կողմից 10/08/2012թ. հայցվորի կողմից հայցից հրաժարվելու

				փաստաբանական ծառայությունների դիմաց:	հիմքով:
51.	Գագիկ Աթասյան «Aravot.am» («Բացահայտում. տարվա քաղաքացու իրական դեմքը», 18. 01. 2012 թ.), «Hraparak.am» («Տարվա քաղաքացու իրական դեմքը», 20. 01. 2012 թ.), «Hetq.am» (29. 02. 2012), «Mitq.am» («Աշխարհահռչակ ռեժիսո՞ր», 11.03.2012), ինչպես նաեւ՝ «Հրազդան» ՀԸ-ի կայքերում հրապարակված հոդվածների համար:	Մնացական Հարությունյան «Հրազդան» հեռուստաընկերության հիմնադիր «Սիրակ» ՍՊԸ-ի տնօրեն	29-05-2012 ԿԴ/0232/02/12	• ներողություն խնդրել, • 1 մլն վիրավորանքի, • 2 մլն զրպարտության դիմաց, • Վճիռը հրապարակել լրատվամիջոցներով, որոնցով տարածվել է տեղեկատվությունը •	Դատաքննությունն ավարտվել է: Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանը 18/03/2013թ. ամբողջությամբ մերժել է հայցը, վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններն անփոփոխ են թողել վճիռը:
52.	Միխայիլ Անդրյասյան	Նովոյե վրեմյա օրաթերթի խմբագրություն ՍՊԸ	04/06/2012 ԵԿԴ/1287/02/12	• 2 մլն դրամ զրպարտության դիմաց	**Դատաքննությունն ավարտվել է:** Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում կնքնվել է հաշտության համաձագիր, սակայն հայցվորը բողոք է բերել վերաքննիչ դատարան պետական տուրքի մասով, որը մերժվել է:
53.	Անուշավան Նիկողոսյան Կայքում հրապարակված «աբիժնիկության»	« Վիրտուալ Մեդիա ՍՊԸ	ԵԿԴ/1325/02/12 06-06-2012	• ներողություն խնդրել • հերքել, • վճարելու 3 մլն դրամ փոխհատուցում՝	**Դատաքննությունն ավարտվել է:** Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն ամբողջութամբ մերժել է հայցը

	պատճառը» վերնագրով հրապարակման հիմքով:			վիրավորանքի ու զրպարտության դիմաց:	14/12/2012թ. Բողոքարկվել է վերաքննիչ դատարան, որը մերժել է բողոքն ամբողջությամբ, իսկ Վճռաբեկ դատարանը վերադարձրել է բողոքը:
54.	Տիգրան Քոչարյան	«Կողմնակի անձանց Մ» ՍՊԸ («Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթ)	18-07-2012 ԵԿԴ/1634/02/12	• 3 մլն վիրավորանք և զրպարտության դիմաց • 500,000 դատական ծախսեր	**Դատաքննությունն ավարտվել է,** Կենտրոն և Նորք-Մարաշ առաջին ատյանի դատարան Դատավոր՝ Ալեքսեյ Արշալույսի Սուքոյան 20/03/13 վճռով Դատարանը սահմանել է, որ հայցվորին հասցվել է վիրավորանք և զրպարտություն և սահմանել է 500.000 ՀՀ դրամի չափով փոխհատուցում՝ 300.000 ՀՀ դրամը՝ որպես վիրավորանքի և 200.000 դրամը զրպարտության դիմաց, ինչպես նաև 200,000 դրամ փաստաբանի վարձավճարի դիմաց: Վճիռը չի բողքարկվել:
55.	Անուշավան Նիկողոսյան գործարար համբավին պատճառված վնասը հատուցելու պ/մ	« «Վիրտուալ մեդիա» ՍՊԸ	30/08/2012 ԵԿԴ/1931/02/12	• Ներողություն • 1.5 մլն դրամ փոխհատուցում	**Դատաքննությունն ավարտվել է,** դատարանը գործը կարճել է , քանի որ նույն վեճի վերաբերյալ առկա է թիվ ԵԿԴ/1325/02/12 դատական գործ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան
56.	Արմեն Դարբինյան	<Քաղաքական հետազոտությունների կենտրոն> ՍՊԸ 2012 թ. օգոստոսի 18-ին «N-idea.am» կայքում հրապարակված՝ «Արմենչիկ Դարբինյանը վճարել չի սիրում. ինչո՞ւ պիտի սիրի որ, եթե	18/09/2012 ԵԿԴ/2050/02/12	• ներողություն խնդրել, • վիրավորանքների համար 1 մլն դրամ • Զրպարտության համար 2 մլն դրամ, • 1 մլն դրամ փաստաբանի	**Դատաքննությունն ավարտվել է,** Առաջին ատյանի դատարանը մասնակիորեն բավարարել է բողոքը՝ որոշելով. ա/պարտավորեցնել ներողություն խնդրել բ/ պարտավորեցնել վճարել 200.000 դրամ վիրավորանքի դիմաց գ/ պարտավորեցնել վճարել 200.000 դրամ

		պաշտպանվում է հայկական պետության կողմից» վերնագրով հոդվածի համար		վարձատրություն • 84000 դրամ պետտուրք:	զրպարտության համար, դ/ բռնագանձել 150.000 ՀՀ դրամ փաստաբանի վարձատրության ծախսի դիմաց, ե/ բռնագանձել պետական տուրքի գումարից՝ 8.000 ՀՀ դրամ: Վերաքննիչ դատարանը ուժի մեջ է թողել վճիռը 10/07/2013թ. Վճռաբեկ բողոք չի բերվել:
57.	Մարիամ Եփրեմյան	www.News.am լրատվական ծառայություն MIG TV լրատվական ծառայություն	08/10/2012 ԼԴ/0769/02/12	• Հանել համացանցից նյութերը, • յուրաքանչյուր պատասխանողից բռնագանձել 500,000-ական ՀՀ դրամ	Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը 21/03/2013թ. կայացրել է որոշում, որով կարճել է գործը MIG TV լրատվական գործակալության մասով, քանի որ հայցվորը հրաժարվել էր հայցից, իսկ www.news.am լրատվական ծառայության մասով մերժել է, քանի որ չի հիմնավորվել, որ www.youtube.com կայքում տեսանյութը տեղադրվել է լրատվական ծառայության աշխատակցի կողմից: Վճիռը չի բողոքարկվել:
58.	Ռազմիկ Աբրահամյան	Հայկական ժամանակ օրաթերթ և Առավոտ օրաթերթ	05-11-2012 ԵԿԴ/2408/02/12	• 4 մլն դրամ փոխհատուցում վիրավորանքի և զրպարտության դիմաց • տպագրել հերքում:	**Դատաքննությունն ավարտվել է:** Կենտրոն և Նորք Մարաշ դատարան Դատավոր՝ Ռուբեն Ափինյան 07.03.2013թ.-ին դատարանն ամբողջությամբ մերժել է հայցը այն հիմքով, որ լրատվանյութը հրապարակվել է նախաքննության տրամադրած նյութերի հիման վրա: Բողոքարկվել է վերաքննիչ դատարանը, որը մերժել է բողոքն ամբողջությամբ: Վճռաբեկ բողոք չի բերվել:
59.	Տիգրան Ուրիխանյան	Էդգար Բարսեղյան	21/11/2012	• Ներողություն խնդրել,	**Դատաքննությունն ավարտվել է:**

	Ազգային ժողովի պատգամավոր		ԵԿԴ/2637/02/12	• 1 մլն դրամ փոխհատուցում • Համացանցում արատավորող նյութերը հեռացնել	Կենտրոն և Նորք Մարաշ դատարանը կարճել է գործը, քանի որ հայցվորը հրաժարվել է հայցից:
60.	Ռոբերտ Քոչարյան և Սեդրակ Քոչարյան	<Սկիզբ մեդիա կենտրոն> ՍՊԸ և <Առաջին լրատվական> ՍՊԸ	27/12/2012 ԵԿԴ/2982/02/12	• Հերքում • 5 մլն դրամ փոխհ.	Կենտրոն և Նորք Մարաշ դատարանը հայցը բավարարել է մասնակի, որոշելով. Դատավոր՝ Ալեքսեյ Սուքոյան Պարտավորեցնելով՝Սկիզբ Մեդիա Կենտրոն՝ ՍՊ ընկերությանը հերքել՝ տեղեկությունները տպագրել հերքում նույն՝Ժամանակ՝ օրաթերթում: ՝Սկիզբ Մեդիա Կենտրոն՝ ՍՊ ընկերությունից հօգուտ Ռոբերտ Քոչարյանի և Սեդրակ Քոչարյանի բռնագանձել 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ որպես փաստաբանական ծախսի գումար: Ռոբերտ Քոչարյանից և Սեդրակ Քոչարյանից հօգուտ՝Առաջին լրատվական՝ ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ որպես փաստաբանական ծախսի գումար: ՝ բռնագանձել 10.000 /տաս հազար/ ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:
61.	Երևանի թռչնաբուծական ֆաբրիկա ԲԲԸ և Խաչիկ Խաչատրյանը	Ժողովուրդ թերթի խմբագրություն ՍՊԸ և լրագրող Սոնա Գրիգորյան 2012 թ. դեկտեմբերի 12-ին	10-01-2013 ԵԿԴ/0061/02/13	• Հերքում • Ներողություն խնդրել • 1 մլն դրամ վիրավորանքի դիմաց • 2 մլն դրամ զրպարտության	**Դատաքննությունն ավարտվել է** Կենտրոն և Նորք-Մարաշ դատարան դատավոր Ափինյան, Դատարանն ամբողջությամբ մերժել է հայցը, վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

		Ժողովուրդ օրաթերթում տպագրված՝ «Գործարար էլիտայի բացիլները» վերնագրով հրապարակման կապակցությամբ		դիմաց	
62.	Խաչիկ Խաչատրյանը	Ժողովուրդ թերթի խմբագրություն ՍՊԸ և լրագրող Սոնա Գրիգորյան	10-01-2013 ԵԿԴ/0062/02/13	• Հերքում • Ներողություն խնդրել • 1 մլն դրամ վիրավորանքի դիմաց • 2 մլն դրամ զրպարտության դիմաց	Կենտրոն և Նորք-Մարաշ Գագիկ Ռաֆիկի Խանդանյան Հաջորդ դատական նիստը 28.11.2013
63.	Հարություն Սարգսյան	Ցայգ հեռուստատեսություն	23-01-2013 ՇԴ/0081/02/13	• ներողություն խնդրել • 300,000 դրամ փոխհատուցում վիրավոր	Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Նարինյան Հաջորդ դատական նիտը 11-06-2013
64.	Շինֆորում ՍՊԸ	Հետաքննող լրագրողներ ՀԿ	06-02-2013 ԵԿԴ/0268/02/13	• Հերքում • 2,2 մլն դրամ փոխհատուցում	19.04.2013թ. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից գործը կարճվել է, քանի որ հայցվորը հրաժարվել է հայցից:
65.	Կարինե Ավանեսյան	Լրագիր վէբ-կայք	ԵԿԴ/0996/02/13 26-04-2013	•	Դատաքննությունն ընթացքի մեջ է առաջին ատյանի դատարանում, դատական նիստը նշանակվել է 13.11.2013թ.-ին:
66.	Կարինե Ավանեսյան	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա	26-04-2013 ԵԿԴ/0998/02/13	•	Առաջին ատյանի դատարանը մերժել է բողոքը հայցային վաղեմության հիմքով

67.	Կարինե Ավանեսյան	Հետք էլեկտրոնային թերթ	26-04-2013 ԵԿԴ/0995/02/13	•	Դատական նիստը նշանակվել է 2013թ. նոյեմբերին:
68.	Կարինե Ավանեսյան	Մելտեքս ՍՊԸ	26-04-2013 ԵԿԴ/0994/02/13	•	Դատական նիստը նշանակվել է 2013թ. նոյեմբերին:
69.	Կարինե Ավանեսյան	Գոլոս Արմենի վէբ-կայք	26-04-2013 ԵԿԴ/0999/02/13	• Հերքում • 3 մլն վիրավորանքի և զրպարտության դիմաց	Դատաքննությունն ավարտվել է: Առաջին ատյանի դատարանը մերժել է հայցը հայցային վաղեմության հիմքով: Որոշումը չի բողոքարկվել:
70.	Կարինե Ավանեսյան	Փաստինֆո(1)	26-04-2013 ԵԿԴ/0997/02/13	•	Դատարանը որոշել է հայցվորի կողմից Փաստինֆո գործակալության դեմ ներկայացված երկու այլ հայցերը (դատական գործեր ԵԿԴ/1063/02/13 (ներկայացված 06-05-2013-ին և թիվ ԵԿԴ/1188/02/13՝ ներկայացված 22-05-2013) միացնել սույն գործի հետ և դրանք քննել որպես մեկ գործ: Դատական քննությունը նշանակվել է 04.12.2013թ.-ին:
71.	Նարինե Ղազարյան	"ԱրմՆյուզ" ՓԲԸ	11.06.2013 ԵԱԴԴ/0653/02/13	• Հերքում • Ներողություն • փոխհատուցում	Աջափնյակ և Դավթաշեն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /դատավոր/ Մարգարիտա Հարթենյան Դատաքննությունը նշանակված է 02.12.2013թ.
72.	Շանթ ՍՊԸ	Իրավունք Մեդիա ՍՊԸ	20-08-2013 ԵԿԴ/1941/02/13	• 1 մլն դրամ փոխհատուցում վիրավորանքի ու զրպարտության դիմաց • Ներողություն խնդրել • հերքում	

73.	Վախթանգ Միրումյան	«Ար» հեռուստաընկերություն	22-08-2013 ԵՇԴ/1057/02/13	• Հրապարակայնորեն ներողություն խնդրել, • զրպարտություն համարվող փաստացի տվյալները հրապարակայնորեն հերքել	Ընթացքի մեջ է Շենգավիթ դատարանում
				•	
				•	